«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ** ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ:

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ

ՀԵՂԻՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ՍԱՆԱՄ

ՄԱՐԶ ՇԻՐԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<ԵՐԱԶԳԱՎՈՐՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

# Բովանդակություն

1.Ընտրված թեմայի ( խնդրի ) արդիականություն (նախաբան)----------3

2. Գրականության ակնարկ----------4

3. Գործնական համատեքստ----------5

4. Ամփոփում----------25

5. Օգտագործված գրականության ցանկ ----------27

## *1. Ընտրված թեմայի (խնդրի) արդիականություն (նախաբան)*

*Հետազոտության արդիականությունը:* Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համայնքի կառուցվածքային միավոր, համարվում է պետական հոգածության առարկա: Ընտանիքը հասարակության՝ ամուսնությամբ կամ ազգակցական կապերով կապված, համատեղ ապրող, միմյանց համար բարոյական պատասխանատվություն կրող անդամների կողմից ձևավորված սկզբնական կառույց է: Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում. սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հորձանուտում աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը՝ արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի, ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Ուսուցիչների, ծնողների և երեխաների փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե նշված սուբյեկտներն ստանձնեն փոխհամաձայնեցված աշխատանքի պատասխանատվություն, գործեն միասին, համատեղ ջանքերով պլանավորեն գործունեությունը և իրականացնեն արդյունքների համատեղ գնահատում:

Այդօրինակ համագործակցությունը ենթադրում է մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխայի և համատեղ գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, երեխայի ուսումնասիրում ընտանիքում և նրա զարգացման ծրագրի կազմում: Միաժամանակ դպրոցի խնդիրն է զարգացնել ծնողների և երեխաների համագործակցության ու հաղորդակցման կարողությունները:

## *2. Գրականության ակնարկ*

Հետազոտության հիմնախնդրին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան սահմանվել են հետևյալ ***խնդիրները.***

1. Բացահայտել և վերլուծել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ծնողների համագործակցության կազմակերպման հիմնախնդրի մշակվածության աստիճանը, որոշակիացնել տեսական-հայեցակարգային մոտեցումները խնդրի արդյունավետ լուծման վերաբերյալ:

2. Որոշել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, ծնողների և սովորողների հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները:

3. Սահմանել և բնութագրել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների ու ծնողների համագործակցության բովանդակությունը և դրա արդյունավետ իրականացման մեթոդիկան:

4. Մշակել և տեսականորեն հիմնավորել սովորողների, նրանց ծնողների և մանկավարժական կոլեկտիվի փոխգործակցության արդյունավետ մանկավարժական պայմանների՝ ձևերի և միջոցների համալիրը դպրոցի կառավարման համակարգում:

***Հետազոտության նպատակն է*** մշակել և փորձով հիմնավորել ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների հետ , դրա իրականացման ուղիները, միջոցներն ու ձևերը: Փորձով հիմնավորել մանկավարժական այն պայմանները, որոնք արդյունավետ կդարձնեն դպրոցի, սովորողների և նրանց ընտանիքների համագործակցությունը միասնական դաստիարակչական դաշտի ապահովման տեսանկյունից:

Աճող սերնդի ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը դիտարկվել է Խ. Աբովյանի, Մ. Թաղիադյանի, Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Ա. Բահաթրյանի, Կ. Ն. Վենտցելի, Պ. Ֆ. Կապտերևի, Յ. Ա. Կոմենսկու, Պ. Ֆ. Լեսգաֆտի, Ջ.Լոկկի, Ա. Ս. Մակարենկոյի, Ի. Հ. Պեստալոցցու, Ն. Ի. Պիրոգովի, Ժ. Ժ. Ռուսոյի, Վ. Ա. Սուխոմլինսկու, Լ. Ն. Տոլստոյի, Կ.Դ. Ուշինսկու և այլոց կողմից:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնախնդրի գիտատեսական հիմունքներն արտացոլված են Ա. Տ. Շացկու, Ն. Ի. Բոլդիրևի, Ի. Վ. Գրեբեննիկովի, Վ.Ն.Գուրովի, Վ.Ա.Կարակովսկու, Մ. Մ. Պոտաշնիկի, Ն.Ե. Շչուրկովայի, Ա. Օ. Թոփուզյանի Ժ. Ս. Թադևոսյանի, Հ. Կ. Կարապետյանի, և այլոց

աշխատություններում:Ընտանեկան դաստիարակության արդի հիմնախնդիրները դիտարկվել են Ա. Լ. Գրիգորյանի, Լ.Վ. Թորգոմյանի, Գ. Հ. Հակոբյանի, Յու.Պ. Ազարովի, Ի.Վ. Բեստուժևա-Լադայի, Է.Կ. Վասիլևի, Վ. Ա. Կան-Կալիկի և այլոց կողմից:

## *3. Գործնական համատեքստ*

***Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:***

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը: Որպես մի շարք գործոնների ազդեցությունների համակցություն այն ուղեկցում է մարդուն՝ ծնված օրից մինչ չափահասություն: Կրթության համար պատասխանատվություն են կրում ընտանիքը և դպրոցը: Այդ տեսակետից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության կառուցումը: Եթե մենք իսկապես ուզում ենք բավարարել մեր հասարակության կրթական կարիքները, անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Կարևորը ճիշտ դաստիարակության սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար, հանգիստ, հավասարակշռված և ուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ: Ծնողները երեխայի առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ՝ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար: Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար: Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ, որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր: Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները

պատասխանատվությունը: Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՝ ընտանիքներում, և դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ո՛չ ծնողները, ո՛չ ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝ երկուստեք հաճախ սկսում են կորցնել կողմնորոշումը՝ կանգնելով այնպիսի բարդ խնդիրների առաջ, ինչպիսիք են՝ գերտեղեկատվությունը և զանգվածային լրատվության միջոցների կողմից առաջարկվող այլընտրանքային մոդելները: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը: Ուսուցիչ և ծնող ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ: Դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցչը: Նա իր ժողովրդի այն զինվորն է, որի զենքը գիտությունն է: Նա տիրապետում է մարդ դաստիարակելու արվեստին: Իր գործին նվիրված ուսուցչի ամբողջ կյանքն անցնում է սերունդներին կրթելու և դաստիարակելու նորանոր ուղիների որոնման մեջ: Դաստիարակության բուն էությունը աշակերտներին և նրանց զգացմունքներին ճիշտ ուղղություն տալն է: Ռուս մանկավարժ Պիսարևն ասել է. «Դաստիարակության մեջ ամբողջ գործն այն է, թե ով է դաստիարակում»: Դասարանի անդամները սեփական ընտանիքների յուրատիպ արտացոլումն են, և մեծ ուժ է անհրաժեշտ, որպեսզի դասարանում ուսուցիչն ստեղծի միասնական առողջ մթնոլորտ: Այդ կոլեկտիվի միջանձնային ներդաշնակ հարաբերությունները կնպաստեն առաջադիր նպատակների իրականացմանը և հաջողությունների ձեռքբերմանը: Այս ասպարեզում յուրաքանչյուր անհատ իրեն զգում է լիիրավ գործող անդամ և ամեն պարագայում պատասխանատու անձ: Դասարանի յուրաքանչյուր ոք կձգտի խորհրդակցել, իր հաջողություններով ուրախացնել, կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ: Ուսուցչի պարտքն է՝ ճանաչել ու հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները, պաշտպանել նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում: Այս բոլոր գործոնները երեխաներին կհաղորդեն պաշտպանվածության

զգացում և ինքնավստահություն, կստեղծեն ստեղծագործնական ակտիվություն ու լիարժեք զարգացում: Մանկավարժության մեծագույն նվաճումը ոչ միայն դաստիարակության զարգացման տեսական մոտեցումների մշակումն է, այլև առկա հիմնախնդիրների գործնական լուծումների արդյունավետ փորձերը: Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Հակառակ դեպքում թե՛ մեկը, թե՛ մյուսը դրական արդյունք չեն կարող տալ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում: Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են՝ հետաքրքրասիրությունը, ուշադրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր: Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի լայն և խոր ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական մեթոդների հիմքում ընկած են երեխայի ազատ մտածողության, վերլուծական, ստեղծագործական մտածողության, տրամաբանության, ինչպես նաև արագ կողմնորոշվելու ունակության զարացումը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»:

Ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողն ընտանիքն է: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման, կայացման հարցում: Այստեղ են դրվում երեխայի անձնավորության հիմքերը, և կառուցվում է նրա սոցիալական կերպարը: Փոքր հասակից երեխայի կամքը, գիտակցությունը և զգացմունքներն ուղղորդող ուժը ընտանիքն է: Այն երեխաների հուզական փոխհարաբերությունների թրծման դարբնոցն է: Երեխան իր գոյության առաջին իսկ օրից անդամ դառնում է ընտանեկան թիմի, որտեղ կիսվում են հաջողությունները, ուրախությունները, հոգսերը, կարիքներն ու տխրությունը: Շրջապատից առաջին տպավորությունները մանկիկը ստանում է ընտանիքում, ուր ձևավորվում է նրա բնավորությունը: Հարազատ ընտանեկան միջավայրում է նա ստանում

հոգևոր ու բարոյական նախնական դաստիարակություն: Ծնողների օգնությամբ երեխան ձեռք է բերում կենսական հմտություններ: Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Նրանց դերն անկյունաքարային է երեխայի անհատականության կայացման հարցում:

Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը անհատի՝ ոչ իբրև սոսկ ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշներ ու առաքինություններ կրող անհատականություն ձևավորելու բնականոն և արդյունավետ գործընթացն է: Ծնողները սեփական օրինակով օգնում են իրենց զավակին՝ սովորելու ամենառաջնային ու կենցաղում գործածական հասկացությունները: Ի սկզբանե երեխաներն ընտանեկան միջավայրում են առնչվում այնպիսի բարոյական արժեքների, ինչպիսիք են՝ ազնվությունը կարեկցանքն ու ապրումակցումը:

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակությամբ են պայմանավորվում այն փոփոխությունները, որոնք մարդը կրում է ծնվելու պահից մինչև հասուն դառնալը: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Վ. Հյուգոն ասում էր.«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անկապտելի մասը»: Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում:Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ: Մխիթար Գոշը նշում էր, որ զավակների զանցանքների և հանցանքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս՝ երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարության, ազնվության և մարդասիրության սերմեր: 19-րդ դարի հայ լուսավորիչներն ու գրողները (Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Մ. Թաղիադյան, Ն. Ձիրոյան, Ռ. Պատկանյան, Մ. Նալբանդյան, Րաֆֆի) աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ տեղ էին տալիս ընտանիքին: Նրանք ընդգծում էին ընտանիքի վճռորոշ դերը՝ երեխայի ապագայի ճիշտ կազմակերպման, նրա հակումների անկաշկանդ զարգացման առումով: Ընտանիքի ներգործությունն առավել նպաստավոր կարող է լինել, եթե այնտեղ հաստատված լինեն համերաշխ ու անշահախնդիր, անկեղծ ու ներդաշնակ հարաբերություններ:

Հանրահայտ ճշմարտություն է, որ երեխայի դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց և շնորհակալ ու հաճելի գործ է, որը չի կարելի ամբողջովին թողնել մանկապարտեզի ու դպրոցի վրա:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է ընտանիքի առաջնային դերը երեխայի դաստիարակության գործում: Յուրաքանչյուր ընտանիք հասարակությանը նախապատրաստում է ապագային և միաժամանակ յուրաքանչյուր ընտանիք ընդլայնում է գոյություն ունեցող հասարակությունը/Ի. Ս. Կոն/:

Գաղտնիք չէ, որ ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ պահպանողն ընտանիքն է: Ընտանիքում ձևավորվում են մարդու հոգևոր և բարոյական կայացման նախադրյալները: Ընտանիքում սկիզբ առած բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստավոր պայմաններ է ստեղծում անհատի, նրա անձնային որակների ձևավորման համար: Եթե անհատը մեծանում է բարոյապես ամուր, սիրո, համաձայնության և հարգանքի հիման վրա ստեղծված փոխհարաբերությունների առկայության պայմաններում, բնական է, որ այդ ամենն իր դրոշմն է դնում նրա հոգու ու սրտի վրա, և կերտվում է իսկական ու լիարժեք մարդ:

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էր առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց: Նրանք հատուկ կերպով և պայմաններում, քիչ թե շատ հետողականորեն իրականացնում էին երեխաների զարգացումը:

Ընտանիքը հասարակության նյութական, հոգևոր, մշակութային և այլ արժեքներ փոխանցող կարևոր օղակ է: Մի շարք հետազոտություններ ապացուցում են, որ սոցիալական ոչ մի այլ խումբ չի կարող իրագործել գործառույթների այն համակարգը, որն իրականացվում է ընտանիքի կողմից և ընտանիքի միջոցով:

Ամերիկացի հայտնի հոգեբույժ և հոգեբան Սքոթ Պեկի «Կարգուկանոն» տեսագործնական համակարգը սովորեցնում է հաղթահարել ընտանեկան կյանքի մի շարք խնդիրներ: Ըստ նրա՝ անհրաժեշտ է, որ մենք ինքներս սովորենք լինել կարգապահ և նույնը սովորեցնենք մեր երեխաներին:

Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին նախապայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում մեծանում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ երեխաներ:

Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության «համամասնությունը»: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները, և ընդհակառակը՝ անթույլատրելի է երեխային հաճախակի պարսավանքի ենթարկելը, պատժելն ու մերժելը: Այդ ամենը պետք է լինի չափավորված ու դուրս չգա անհրաժեշտության սահմաններից:

Կարևոր է նաև երեխայի անհատականության պահպանումը, իհարկե, չանտեսելով հասարակական վարքի կանոնները:

Ժամանակակից մանկավարժության մեջ առանձնանում են ծնողական դաստիարակության երեք հիմնական ոճեր՝ ինքնիշխան /ավտորիտար/, հանդուրժողական և ժողովրդավարական:

1. Այն ծնողները, որոնք հակված են ավտորիտար դաստիարակչական ոճին, սովորաբար նյարդային են, դժգոհ, իշխող և կոպիտ:Նրանք հազվադեպ են արտահայտում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքեր ասելն ավելորդ ճոխություն է: Նրանց հարաբերություններում ծնողը միշտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են վախկոտ, ջղային, դժբախտ: Նրանք հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում: Դաստիարակչական նման ոճի կիրառման արդյունքում առողջ չեն երեխա-ծնող հարաբերությունները, և անխուսափելի են վեճերը:

2. Դաստիարակության հանդուրժողական ոճ որդեգրած ծնողները ջերմեն և հուզական իրենց երեխաների հանդեպ: Սակայն նրանք էլ սահմանափակ հսկողություն են իրականացնում և քիչ են մասնակցում նրանց կյանքին:Նրանք հեշտությամբ տեղի են տալիս երեխայի հաճույքներին: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, հեշտությամբ իրենց կամքը թելադրում են ծնողներին և թերահավատությամբ վերաբերվում վերջիններիս: Ժամանակակից ընտանիքներում այսօր հաճախ է հանդիպում այն երևույթը, երբ մայրը կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, և ունենում է ինքնավստահության պակաս:

3. Երրորդ ոճը ժողովրդավարականն է: Նման ծնողները լինում են ջերմ,հանգիստ, չափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում են նրա հետ և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են ծնող-երեխա բարեհարմար հարաբերությունների ստեղծմանը, նրանց և զավակների միջև իշխում է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են և շիտակ:Կարևոր է, որ ծնողները գիտակցեն՝ իրենցով է պայմանավորված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան՝ կլինի երջանիկ, վստահ իր ուժերին, թե՝ անվստահ, ցածր ինքնագնահատականով, որը չգիտի՝ ինչպես իրեն դրսևորել շրջապատում:

Բազմազան են ընտանիքում երեխաների դաստիարակության միջոցներն ու ուղիները: Ծնողներն իրենց երեխայի վարքի և բնավորության, հայացքների ու համոզմունքների ձևավորման վրա ամենից առաջ ազդում են իրենց սեփական օրինակով և հեղինակությամբ: Այսինքն՝ ծնողի լավ և ուսանելի օրինակը դաստիարակության հիմնական միջոցն է ընտանիքում: Նրա կողմից իրականացվող դաստիարակությունն ընտանիքում պետք է ունենա մանկավարժական ուղղվածություն: Դրա համար անհրաժեշտ է ծնողներին ներգրավել դպրոցի մանկավարժական գործընթացների մեջ, մշակել մեթոդներ՝նրանց մանկավարժական գիտելիքներ հաղորդելու և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին ծանոթացնելու համար:Իմ կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզեցի, որ ծնողների հիմնական մասը չունի մանկավարժական կրթություն, չի տիրապետում երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին:Նրանք հիմնականում հենվում են դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքի վրա: Որոշ ծնողներ ինքնուրույն օգտվում են համապատասխան լրատվական աղբյուրներից /ամսագիր, հեռուստատեսային հաղորդաշարեր, ռադիոհաղորդումներ, գիտահանրամատչելի գրականություն և այլն/ և այդ հիմքով կազմակերպում իրենց երեխաների առօրյան:Նրանց հետ անցկացված հարց ու պատասխանի և թեմատիկ զրույցների միջոցով պարզ դարձավ, որ նրանք ցանկություն ունեն ձեռք բերելու մանկավարժական գիտելիքներ: Նրանք չեն տիրապետում երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին, ինչպես նաև հոգեկանի զարգացման օրինաչափություններին, այդ պատճառով էլ դժվարանում են ընտանիքում ճիշտ կազմակերպել երեխայի դաստիարակությունը: Հաշվի առնելով ընտանեկան դաստիարակության առկա վիճակն ու դաստիարակության ժամանակակից մոտեցումները՝ հարկավոր է մշակել դպրոցականի ընտանեկան դաստիարակության ուղեցույց /հրահանգներ, խորհուրդներ, մեթոդական ցուցումներ/, որտեղ կներառվեն դաստիարակության ժամանակակից մոտեցումներից բխող

հրահանգներ, ինչպես նաև բազմաբովանդակ խորհուրդներ՝ ծնողներին: Անհրաժեշտ է դպրոցական հաստատություններում պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ,ծնողական համաժողով, որի ընթացքում կարելի է անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցել հատկապես դպրոց նոր ընդունված երեխաների ծնողներին: Յուրաքանչյուր հանդիպում պետք է ավարտել ծնողներին հուզող հարցերին պատասխանելով: Հարկավոր է ամրագրել այն հիմնախնդիրները,որոնք ունեն ընդհանրական բնույթ և ենթադրում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Անհրաժեշտ է դպրոցներում կազմակերպել ծնողական թեմատիկ գիտաժողովներ, սեմինարներ և կլոր սեղաններ՝ դաստիարակության առկա խնդիրների շուրջ: Այդ հավաքներին պետք է մասնակցեն համապատասխան մասնագետներ, դպրոցական կրթական հաստատությունների աշխատակիցներ և ծնողներ: Քննարկման առարկա կարող են լինել հետևյալ թեմաները՝ «Հայրիկների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործընթացում», «Ընտանիքի անդամների փոխհարաբերությունների ներգործությունը երեխայի դաստիարակության վրա», «Ընտանիքում միայնակ մեծացող երեխաների դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները», «Վեց տարեկանը դպրոցում», «Դպրոցականի սեռադերային սոցիալականացման խնդիրները» և այլն:

Եթե բոլոր ընտանիքներում ծնող- երեխա փոխհարաբերությունը կառուցվի սիրո, համերաշխության ու ներողամտության, միմյանց զիջելու և դիմացինի կարծիքը հաշվի առնելու սկզբունքով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր: Եթե ընտանեկան դաստիարակության հիմունքները կառուցված լինեն ազգային ավանդույթների և ժամանակակից դպրոցական մանկավարժության պահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահպանի իր ազգային դիմագիծը, և երեխաները կլինեն հայրենասեր: Նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապահպանման հիմքն է:

Տարբեր են **ծնողական ժողովների** վերաբերյալ մարդկանց պատկերացումները: Շատերը թարմ հիշողություններ են պահպանել դպրոցական տարիներից,երբ ծնողների վերադարձին սպասում էին տագնապած մտքերով. «Ի՞նչ տրամադրությամբ կվերադառնա ծնողը ժողովից», «Ի՞նչ կխոսեն ուսուցիչներն իրենց մասին» և այլն: Այսօր փոխվել են ծնողական ժողովների բովանդակությունը, կազմակերպման պահանջներն ու մոտեցումները: Դպրոցական կրթության ոլորտում ավանդական դարձած այս միջոցառումը հնարավորություն է տալիս բաց լսարանում բոլոր ծնողներին ի լուր հրապարակել տվյալ դասարանի սովորողների առաջադիմությունը, հաջողություններն ու ձեռքբերումները:Միաժամանակ այն միջոց է՝ օգնելու մի շարք այնպիսի խնդիրների լուծմանը,որոնք ծնողներն ապարդյուն փորձում են կարգավորել ինքնուրույն: Ծնողական

ժողովը մանկավարժ-ծնողներ կապի գործուն միջոց է և փոխադարձ շփման լավ հնարավորություն:

Յուրաքանչյուր հանդիպում ծնողների համար պետք է լինի օգտակար և արդյունավետ, նրանց զինի մանկավարժական, հոգեբանական, աշակերտների ուսումնական գործընթացը խթանող նոր տեղեկատվությամբ: Ժողովը վարող ուսուցիչը չպետք է քննադատի կամ պախարակի սովորողի անձը, ինքնանպատակ ցուցադրի նրա սխալներն ու անհաջողությունները: Չի կարելի վիրավորել նաև ծնողի արժանապատվությունը: Միշտ հարկավոր է հիշել, որ ամեն մի ծնողի համար իր երեխան ամենաթանկն է կյանքում: Ուստի հարկավոր է խելացի և նրբանկատ մոտեցում ցուցաբերել երեխաներին գնահատականներ տալիս:Ծնողական ժողովները տեսակավորվում են ըստ այն պահանջի, թե ո՞րն է ժողովի թեման, և ինչ նպատակներ ու խնդիրներ են դրված տվյալ ժողովի հիմքում: Ցանկալի է քննարկվող տարբերաբնույթ թեմաների վերաբերյալ հարցում կատարել ծնողների միջավայրում՝ պարզելու նրանց կարիքները՝ նախասիրած թեմաները, կամ ընտրել դասարանի աշակերտներին վերաբերող որևէ կարևոր խնդիր և այդ շրջանակում կազմակերպել քննարկում: Ժողովի ընթացքում որևէ խնդրին լուծում տալու նպատակով՝ հարկավոր է հենվել ծնողկոմիտեի կամ այն ծնողների համաձայնության վրա, որոնք ունեն կյանքի և մանկավարժության ասպարեզում փորձ և ներդրում:

Թեմաներից մեկն էլ կարող է վերաբերել դպրոցի համար կարևորություն ներկայացնող խնդիրներին և ծրագրերին: Ծնողական ժողովներին կարելի է հրավիրել տարբեր մասնագետների (իրավաբաններ, բժիշկներ, հոգեբաններ,իրավապահ մարմինների աշխատակիցներ, դպրոցի վարչակարգի անդամներ,հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ): Օրինակ՝ ծնողական ժողովին հրավիրված հոգեբանը կարող է ծանոթացնել տվյալ դասարանում սովորողների տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև ագրեսիվ, տագնապային, ցածր ինքնագնահատականով և վախերով,շփման և ուսումնական դժվարություններ ունեցող երեխաներին վերաբերող թեմաների (մասնագետներ կարող են ընդգրկվել նաև ծնողների կազմից):Ժողովը տեսական թեմաներ ընդգրկելուց բացի՝ պետք է կրի նաև գործնական բնույթ: Ասենք, ժողովի օրակարգը կարող է ներառել իրավիճակի վերլուծություն, սեմինար-խորհրդատվություն, բանավեճ և այլ քննարկումներ:Ժողովների համար հարկավոր է ընտրել բարենպաստ օր և ժամ, որպեսզի ծնողները չունենան նախապես ծրագրված կարևոր զբաղվածություն: Այդ նկատառմամբ՝ անհրաժեշտ է (նամակի կամ այլ միջոցներով) ծնողներին նախապես տեղյակ պահել ժողովի անցկացման օրվա և ժամի մասին: Էական նշանակություն ունի նաև ծնողական ժողովի համար նախատեսված դասասենյակի դասավորվածությունը: Օրինակ՝ կարելի է սեղանները և նստարանները

տեղադրել շրջանաձև, որպեսզի բոլոր ծնողները միմյանց լավ տեսնեն և լսեն: Իսկ եթե նրանք դեռևս միմյանց լավ չեն ճանաչում, սեղաններին, յուրաքանչյուր ծնողի առջև ցանկալի է դնել թղթի վրա գրված անուն-ազգանունն այնպես, որ բոլորին տեսանելի լինի: Ժողովի ընթացքում կարելի է կիրառել աշխուժացնող վարժություններ՝ բոլորի մասնակցությամբ: Հրավիրվածների ժամանակը ճիշտ օգտագործելու նպատակով պետք է սահմանել կանոնակարգ և հետևել դրան: Մարտ ամսին ապագա առաջին դասարան գնացող աշակերտների ծնողների համար հարկավոր է կազմակերպել ծնողական ժողով՝ ներկայացնելով նրանց երեխաների դպրոցական և դասարանական կյանքը, կարգ ու կանոնը և այլն: Այն կարելի է կազմակերպել մեկ գավաթ սուրճի կամ թեյի շուրջ՝ անմիջական մտերմիկ մթնոլորտում: Երեխաների հետ միասին 10-15 րոպե ժամանակով կարելի է ներկա լինեն այն ուսուցիչների դասերին, ովքեր դասավանդելու են առաջին դասարաններում: Դա արդյունավետ միջոց է թե՛ երեխայի հետագա հարմարման և թե՛ ուսուցչի ու նրա գործունեության մասին նախնական պատկերացում ունենալու համար: Դասը պետք է լինի հետաքրքիր և իրականացվի ժամանցային ձևով:Մայիսի վերջին հրավիրված ծնողական ժողովի բովանդակությունը պետք է ներառի տարվա արդյունքների ամփոփումը, պատվոգրերի, շնորհավորագրերի հանձնումը, ինչպես նաև հանդիսավոր մասը՝ համերգի տեսքով: Ծնողկոմիտեն դասղեկի հետ միասին պետք է նախապես լուրջ աշխատանք տանի այդ միջոցառման բովանդակության կազմավորման վրա, որպեսզի բացառվեն ձանձրալի, ինքնանպատակ կոչերն ու ձևականությունները: Իհարկե, ինչպես արդեն նշել եմ՝ ծնողական ժողովների հիմնական նպատակը ծնողներին նոր գիտելիքներով և փորձով հարստացնելն է, ինչպես նաև երեխաների դաստիարակության հարցերի կազմակերպմանն օժանդակելը:Ծնողական ժողովներում ծնողներին հարկավոր է ներկայացնել.

- Տարրական դասարանների ուսումնական ծրագրերի յուրահատկությունները, ուսուցման մեթոդները, գնահատման ձևերը,
- Արտադասարանական միջոցառումների տեսակները,
- Ֆակուլտատիվ պարապմունքների տեսակները,
- Խմբակների գործունեությունը:

Ծանոթացնել տարվա ընթացքում ծրագրավորած արտադասարանային միջոցառումներին (ինտելեկտուալ և սպորտային խաղեր, էքսկուրսիաներ, արշավներ, համերգներ, տոներ, այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ և այլն):

Ծնողական ժողովները պայմանականորեն կարելի է բաժանել կազմակերպչական բնույթի, որոնցում քննարկվում են դպրոցական կյանքի և արտադասարանային միջոցառումների

խնդիրները, և թեմատիկ բնույթի՝ որոնցում ներկայացվում են ծնողների համար հրատապ հարցերը: Կազմակերպչական ժողովները սովորաբար անցկացվում են ուսումնական տարվա սկզբին և ավարտին, իսկ թեմատիկ բնույթի ժողովները՝ տարվա ընթացքում՝ նախապես կազմած պլանով (նաև նախատեսված պլանից դուրս առաջացած հրատապ խնդրի դեպքում):

Ծնողական ժողովների ընթացքում քննարկվող հիմնական հարցեր և թեմաներ

1. Դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծություն:

2. Դասարանական աշխատանքների նպատակների և խնդիրների պլանավորում:

3. Երեխաների ուսման և դաստիարակության հարցերին նպատակամիտված խորհուրդների փոխանակում:

4. Արդի մանկավարժական, հոգեբանական և իրավական խնդիրների քննարկում:

5. Ծնողների գիտելիքների, հմտությունների և հնարավորությունների օգտագործում:

6. Հարցուպատասխանի, խորհուրդների և առաջարկությունների քննարկում:

7. Միասնական որոշումների իրագործում:

Տարրական դասարանների ծնողական ժողովներում քննարկվող թեմաներ

| | | |
|---|---|---|
| **II դաս.** | **1.**Ուսումնադաստիարակչական խնդիրներին վերաբերող թեմաներ<br>• Երկրորդ դասարանցու ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները<br>• Գնահատում և դրա տեսակները<br>• Խորհրդատվություն՝ հետաքրքրող հարցերի վերաբերյալ<br>• Կիսամյակային և տարեվերջյան ամփոփիչ արդյունքների քննարկում<br>• Հետ մնացող և օժտված երեխաները<br>2.Առողջապահական խնդիրներին վերաբերող թեմաներ<br>• Ինչպես խուսափել վտանգներից և վատ սովորություններից<br>• Տարրական դասարանների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորում<br>3.Երեխայի հոգեբանական խնդիրներին վերաբերող թեմաներ<br>• Երեխայի ագրեսիան<br>• Անհատական աշխատանքներ հետ մնացող և օժտված երեխաների ծնողների հետ<br>4.Կազմակերպչական խնդիրներ<br>• Տոները մեր կյանքում<br>• Ճանապարհային երթևեկության կանոնները<br>• Ընտանիք-սպորտ մրցույթի նախապատրաստում՝<br>• Հանդիպում մայրիկների հետ՝ թեյի սեղանի շուրջ<br>• Տարեվերջյան ամփոփիչ արդյունքների քննարկման ժամանակ պատվոգրերի, շնորհավորագրերի հանձնման, համերգի և այլ միջոցառումների կազմակերպում | **դասվար, այլ առարկաներ դասավանդող ուսուցիչներ, տնօրեն, ուսումնական գծով ուսմասվար**<br><br>**բուժաշխատող, իրավապահ մարմինների աշխատակից**<br><br>**հոգեբան**<br><br>**դասվար, կազմակերպիչ, ծնողներ, ֆիզ. ուսուցիչ, ծնողկոմիտե դասվար** |
| **III դաս.** | **1.Ուսումնադաստիարակչական խնդիրներին վերաբերող թեմաներ**<br>• Երրորդ դասարանցու ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները<br>• Գնահատում և դրա տեսակները<br>• Խորհրդատվություն՝հետաքրքրող հարցերի վերաբերյալ<br>• Կիսամյակային և տարեվերջյան ամփոփիչ արդյունքների քննարկում<br>• Հետ մնացող և օժտված երեխաները<br>**2.Առողջապահական խնդիրներին վերաբերող թեմաներ**<br>• Տարրական դասարանների աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորում (բուժաշխատող) | դասվար, այլ առարկաներ դասավանդող ուսուցիչներ, տնօրեն, ուսումնական գծով ուսմասվար<br><br>բուժաշխատող |

| Դաս. | Ծնողական ժողովների թեմատիկան | Կատարող (ներ) |
|---|---|---|
| I դաս. | **1.Ուսումնադաստիարակչական թեմաներ**<br>• Առաջին դասարանցու ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները<br>• Ինչպես աշխատել տանը՝ հետ մնացող կամ օժտված երեխաների հետ<br>• Խորհրդատվություն՝ ծնողներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ<br>• Խաղի նշանակությունը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացի համատեքստում<br>• Առաջին կիսամյակի և տարեվերջյան ամփոփիչ արդյունքների ամփոփում<br>**2.Առողջապահական խնդիրներին վերաբերող թեմաներ**<br>• Երեխայի առողջության պահպանումը<br>• Երեխան և վարակիչ հիվանդությունները<br>• Հիգիենա<br>• Երեխայի մանր մոտորիկայի զարգացումը<br>**3. Երեխայի հոգեբանական խնդիրներին վերաբերող թեմաներ**<br>• Ինչպես օգնել երեխային՝ լինել ուշադիր<br>• Առաջին դասարանցիների հարմարումը դպրոցին. դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները<br>**4.Կազմակերպչական խնդիրներ**<br>• Օրակարգ. «Դպրոցական կանոններ»<br>• Հերթապահություն, կարգապահություն<br>• Դասարանի ծնողկոմիտեի ընտրություն<br>• Սուրճի կամ թեյի սեղանի շուրջ քննարկում՝ մասնակցություն դասարանական կյանքին (ելույթներ ծնողական ժողովներին, էքսկուսիայի կազմակերպում, մասնակցություն ցերեկույթներին, դասալսումներ և այլն )<br>• Աշնանային զբոսանք, այցելություն՝ «Կենդանաբանական այգի», «Մայրիկների տոնը» և այլ միջոցառումների նախապատրաստում:<br>• Հրաժեշտ Այբբենարանին (տարեվերջյան ամփոփիչ արդյունքների քննարկման ժամանակ պատվոգրերի, շնորհավորագրերի հանձնման, համերգի և այլ միջոցառումների կազմակերպում)<br>• Նոր տարվա ցերեկույթ | դասվար, այլ առարկաների ուսուցիչներ, տնօրեն, ուսումնական գծով ուսմասվար<br><br>բուժաշխատող<br><br>հոգեբան<br><br>ծնողկոմիտե, դասվար, դպրոցի կազմակերպիչ, ծնողներ |
| | շուրջ<br>• Տարեվերջյան ամփոփիչ արդյունքների քննարկման ժամանակ պատվոգրերի, շնորհավորագրերի հանձնման, համերգի և այլ միջոցառումներ<br>• Եկեք թերթենք ուսումնական տարվա էջերը<br>• Երեխայի ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը<br>• Գրքի նշանակությունը երեխայի մտավոր զարգացության գործում (դասագրքերի վերանորոգում և հանձնում)<br>• Կիսամյակային ամփոփիչ արդյունքների քննարկում<br>• Տոն՝«Հրաժեշտ տարրական դպրոցին» | դասվար, ծնողկոմիտե<br><br>դասվար, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ծնողկոմիտե, ուսմասվար |

Ծնողական ժողովների շնորհիվ ծնողները հնարավորություն են ստանում ծանոթանալ նաև ուսումնական ծրագրերին: Հետևաբար նրանք կարող են առաջարկություններ անել այն մասին, թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել, և որն է կարևորը: Նրանք կարող են հետամուտ լինել այդ խնդրի իրականացմանը: Ժողովների ընթացքում է նաև ծնողը սեփական կարծիք ձևավորում այն մասնագետների մասին, որոնց հետ երեխան շփվում է դպրոցում, և ովքեր մասնակից են նրա դաստիարակության և անհատականության

ձևավորման գործին: Ի վերջո խնդրահարույց հարցերը (եթե դրանք կան) քննարկվում են դասղեկի, ուսուցիչների և դպրոցի տնօրինության հետ:

Նմանատիպ աշխատանքները տալիս են իրենց պտուղները: Ոչ միայն դասարանի աշակերտների, ուսուցիչների, այլև ծնողների միջև ձևավորվում է բարեկամական մթնոլորտ, ինչն օգնում է արդյունավետ կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը՝ բոլորին դարձնելով դաշնակից՝ ուսուցիչ-ծնող-աշակերտ փոխհարաբերության շրջանակում:

Երեխայի համար դպրոց հաճախելը պետք է դառնա հաճելի կենսակերպ: Յուրաքանչյուր օր նա ուրախությամբ պետք է պատրաստվի, երջանիկ և ուրախ ոտք դնի մանկապարտեզ: Սակայն ոչ միշտ է սկիզբն այսպես սկսվում:

Ընտանիք-մանկապարտեզ, ապա նաև մանկապարտեզ-դպրոց կապը ոչ ձևական, իսկապես իրական տեսնելու ակնկալիքով անհրաժեշտ է սեմինարների ժամանակ պարզել, թե ինչ ցանկություն ունի ծնողը. երեխայի դաստիարակության,նրա բնականոն աշխարհընկալման ձևավորման առումով որտե՞ղ է դժվարանում: Ի՞նչ հարցեր են հուզում այն ծնողին, ով միայնակ է մեծացնում երեխային: Ինչ անել, որպեսզի երեխան, դեռ մանուկ հասակից չտառապի թերարժեքության բարդույթներով, տխուր չլինի, անվերջ ժպտա, զգա մանկության բերկրանքը: Ծնողների հետ շփման նման միջավայրը փոխվստահության մթնոլորտ է ապահովում. ծնողն անկեղծ է, և այս դեպքում երեխայի զարգացումը, ինչն իրականացնում են երկուստեք, նույն ուղղվածությունն է ստանում, իսկ այնուհետև շարունակություն ստանում դպրոցում: Կրտսեր դպրոցականի՝ 21-րդ դարի ազատ, անկախ երիտասարդ ծնողն սպասում է, որ իր համար ևս դպրոցը հաճելի վայր լինի, վերածվի ուսուցողական այնպիսի միջավայրի, ուր ինքը կստանա իրեն ևս հետաքրքրող հարցերի պատասխանները: Դա հնարավոր է իրականացնել միջոցառումների, ժողովների, սեմինարների ու աշխատակիցների հետ առանձին հանդիպումների ընթացքում: Մեր ժամանակներում թերևս փոքր ինչ հնացած է թվում ուսուցչի այցը երեխայի ընտանիք: Սակայն կան բացառիկ դեպքեր, երբ՝

- Չափազանց մշուշոտ է թվում երեխայի ընտանիքի առօրյան ու անվստահելի է նրա դաստիարակությունը:
- Զգացվում է, որ կա բռնություն, ոտնահարվում են երեխայի իրավունքները:
- Ֆիզիկական պատիժ է կիրառվում:
- Երեխան մեծանում է վախի ու սարսափի մթնոլորտում:
- Ականատեսն է ծնողների վեճի ու կռվի՝ սոցիալական շատ խնդիրների պատճառով:

Նման դեպքերում երեխայի տուն այցելելն անհրաժեշտություն է ու պարտադիր: Դա առիթ է տալիս, որ երեխան ավելի մտերմանա ուսուցչի հետ, շփման դաշտն առավել ջերմանա և դառնա արդյունավետ:

Ընտանիք-դպրոց համագործակցության շղթան սկզբնավորվում է տարրական դպրոցում: Վեցից յոթ տարեկան երեխայի կյանքում սկսվում է նոր, կարևոր փուլ՝ կապված նրա զարգացման ու դաստիարակության հետ: Օգտագործելով մանկավարժական հաղորդակցման տարբեր միջոցներ՝ ծնողներին պետք է պարզաբանել, որ 6-7 տարեկան երեխաների դաստիարակությունը որակապես նոր փուլ է՝ համեմատած նախադպրոցական հասակի հետ: Չի կարելի բաց թողնել այդ հնարավորությունը: Երեխայի հետագա՝ դպրոցական հաջողությունը մեծ մասամբ պայմանավորված է այն պայմանով, թե որքանով պետք է ուշադիր լինեն ծնողները՝ լուծելու համար այդ տարիքային խմբի դաստիարակչական-ուսումնական խնդիրները: Ծրագիրը, ուսուցման մեթոդներն աստիճանաբար, աննկատ վերածվում են ուսումնական գործունեության /պարապմունքի տեմպը, հաջորդականությունն ու կազմակերպվածությունը, երեխաների տարրական հմտությունների ձևավորումը/: Խաղը ոչ միայն ազատ ժամանակի անբաժանելի մասն է, այլև ուսուցողական, հետաքրքիր և օգտակար գործունեություն է, նոր շփման ու դաստիարակման միջոց: Ահա ինչու սկիզբը ևս դյուրին չէ. անհրաժեշտ է առավել սերտացնել ընտանիքի հետ կապը: Ծնողներին պետք է ծանոթացնել այն խնդիրներին, որոնց լուծման շարունակությունն իրենք պետք է իրականացնեն՝ համագործակցելով ուսուցիչների հետ: Կարծում եմ, ծնող-դպրոց համագործակցությունը իրական և արդյունավետ կլինի, եթե հաճախակի կազմակերպվեն թեմատիկ ծնողական ժողովներ, մանկավարժները հանդես գան զեկուցումներով:

Մակարենկոն նշել է. «...ընտանիքը դաստիարակում է՝ ինչպես կարող է: Մենք՝ մանկավարժներս, պետք է ուղղորդենք այդ գործընթացը»: Սակայն դաստիարակը և ուսուցիչը չեն կարող վարչարարության ճանապարհն ընտրել: Կազմակերպված ժողովները, միջոցառումները, փորձի փոխանակումն ու հաղորդումը, ծնողական օրերը, տնային այցելությունները պետք է ոչ թե պարտադրանք լինեն, այլ հետաքրքիր՝ ծնողների համար: «Դաստիարակի գործունեության մեջ ոչ մի բան չպետք է լինի առանց դաստիարակության»,- ասել է Աբովյանը: Իմ կարծիքով՝ և՛ նախադպրոցական, և՛ կրտսեր դպրոցական հասակի երեխաների ընտանիքում ոչ բնականոն հարաբերություններն ու սոցիալական պայմանների հետևանքով ծառացած կոնֆլիկտների հետևանքով տան անդորրը խաթարված լինելը բացասաբար են ազդում դաստիարակության վրա. երեխան դառնում է չար, օգտագործում վատ բառեր, դառնում ագրեսիվ, լուռ, տխուր ու անտարբեր: Նորից հիշենք Աբովյանին. «Ինչ վատ բնություն, որ մարդ երեխա ժամանակ է սովորում,

նրան մեծության ժամանակ էլ ճար չի ըլիլ»: Սա չէ՞ արդյոք պատճառը, որ հետագայում դա սխալմամբ որակում ենք որպես գենետիկ, ժառանգական խնդիր: Ծնողը պետք է մեր օգնությամբ գիտակցի, որ դաստիարակություն ասվածը հատուկ բանաձև չունի, այլ դա երեխայի տեսածն է ընտանիքում. ինչպես են վերաբերվում միմյանց ծնողները, տան մեծերը, ինչպիսի ուշադրություն են տածում միմյանց հանդեպ, ինչպիսին են տան կենցաղը, մաքրությունը, ապրելակերպը… Ահա այդ իրավիճակում էլ սովորում ու մեծանում է երեխան:

Կարևոր է, որ ընտանիք-դպրոց կապը չնմանի «կարապ-խեցգետին-գայլաձուկ» մոտեցմանը, երբ «դաստիարակության բեռը» մանկավարժներն ու ծնողները բոլորովին այլ ուղղություններով են ձգում:

Հայտնի է, որ դպրոց գնալը որոշակի սթրես է երեխայի համար՝ բոլոր դեպքերում: Սակայն ծնողներն այնքան են լարվում ու բարդացնում այդ խնդիրը, որ երեխան մոլորության մեջ է հայտնվում. «Ախր, ես ոչինչ չգիտեմ, ես չեմ կարող դպրոց գնալ…»: Մինչդեռ անհրաժեշտ է երեխային բացատրել, որ նա դպրոցու՛մ պետք է այդ ամենը սովորի, ինքն արդեն մեծ է … և այլն:

Լև Տոլստոյն ասել է. «Ամենաանշան մանրուքներն անգամ օժանդակում են երեխայի բնավորության և էության կազմավորմանը»: Եթե ծնողներն ու մանկավարժները հասկանան, որ ուսուցման ու դաստիարակության մեջ չկան մանրուքներ, ապա հենց համագործակցային աշխատանքի շնորհիվ էլ կիրականացնեն մի մեծ առաքելություն՝ երեխայի համար ժպտուն, պայծառ առօրյայի ապահովումն ու լիարժեք մարդ ձևավորելու վեհ գործը:

Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է դպրոցի աշխատանքով: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ցանկալի է, որ ընտանիքն ու դպրոցն աշխատեն նույն ուղղությամբ: Դպրոցի և ընտանիքի միջև հակասությունը բացառվում է այս հարցում: Նրանց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում: Այսօր զգալիորեն աճել է ընտանեկան դաստիարակության դերը: Ընտանիք-դպրոց փոխհարաբերության մեջ .կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվություն է կրում մյուսի հանդեպ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Երեխայի զարգացման վրա ամենաշատը ներգործում է ընտանիքը: Մեծ մանկավարժ Ժան-Ժակ Ռուսոն նկատել է, որ ընտանիքից հետո յուրաքանչյուր

դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը: Ահա ինչու է ընտանիքի դաստիարակությունն այդքան կարևոր: Իսկ դրա արդյունավետ կազմակերպմանը պետք է մասնակից լինի դպրոցը: Ես հենվում եմ ընտանեկան դաստիարակության դրական փորձի վրա՝ օգտագործելով այն կրթության գործընթացում: Ըստ Մակարենկոյի՝ երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և, առաջին հերթին՝ ծնողները: Փոխվել է ուսուցիչ-աշակերտ-ծնող եռանկյունին: Այն մտայնությունը, թե դպրոցը չպետք է աշխատի ծնողի հետ, որ դաստիարակությունը միայն ծնողի գործն է, թյուր կարծիք է: Շատ բան է փոխվել-գնացել, բայց մնացել են ծնողն ու երեխան՝ իրենց հոգսերով, և ուսուցիչն առավել կարիք ունի ծնողի հետ համագործակցության, որպեսզի ավելի արդյունավետ կազմակերպի սովորողների հետ տարվող աշխատանքը: Աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր նպատակն է: Հոգեբաններ Ա. Լ.Ժուրավլյովը, Ն. Ֆ. Ռադիոնովը գտնում են, որ երեխայի կրթությունը մի գործընթաց է, որը վերաբերում է ոչ միայն դպրոցին, այլև ընտանիքին, հետևաբար, անհրաժեշտ է նրանց համատեղ աշխատանքը: Դպրոցի մանկավարժի՝ ընտանիքի հետ աշխատելու նպատակներն են՝

- Օգտագործել այն հնարավորությունները, որոնք ընտանիքում դրական ազդեցություն ունեն երեխայի վրա:
- Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:
- Ներգրավել նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ:
- Համալրել ծնողների իրազեկվածությունը դաստիարակության գործում:

Մեր ժամանակներում կարևորագույն խնդիրը ծնողների ներգրավումն է դպրոցի գործունեության մեջ: Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի համագործակցության որակը: Այս գործոնի կիրառումը մեզ օգնում է պարբերաբար սպառիչ պատասխաններ ստանալ երեխայի վարքի մասին: Դասվարները մշտական և ամենօրյա կապ են հաստատում ընտանիքի հետ: Եթե ծնողները ներգրավված են սովորողների դաստիարակության գործընթացում, ապա աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ: Ծնողների մասնակցությամբ կազմված դպրոցական միջոցառումների ծրագրերն առավել հաջողված են: Ծնողների հետ աշխատանքը կազմակերպում ենք խմբային և անհատական ձևերով: Համագործակցության հասնելու համար նախ փորձում ենք ճանաչել երեխայի ընտանիքը: Առաջին հանդիպման ժամանակ ծնողներին խնդրում եմ լրացնել հարցաթերթիկ՝ հետևյալ բովանդակությամբ.

1.Աշակերտի անունը, ազգանունը

2.Ծնողների անուն- ազգանունները, կրթությունը

3.Ընտանիքում որերորդ երեխան է

4.Աշակերտի սիրած զբաղմունքը

5. Ում հետ է առավել կապված ընտանիքում

6. Ծնողների նախասիրությունները

7. Երեխայի նախասիրությունները

Պարբերաբար թարմացվում են այդ տեղեկությունները: Այս հանդիպումը շատ բան է պայմանավորում: Այդ պահին է դրվում գործարար և արդյունավետ համագործակցության անկյունաքարը: Աշխատում եմ չներկայացնել այն դժվարությունները, որոնք սպասում են ծնողին ու երեխային: Խիստ կարևոր են ծնողների հետ ընկերական-գործնական հարաբերությունների ձևավորումը և նրանց վստահության նվաճումը: Ընտանիք-դպրոց համագործակցությունը նպաստում է, որ ուսումնառությունը յուրաքանչյուր աշակերտի համար վերածվի ստեղծագործական միջավայրի, ստեղծվի միասնական հանրույթ՝ ծնող-աշակերտ-ուսուցիչ: Մեր դպրոցների մեծ մասում կիրառվում են ընտանիքի հետ համագործակցության ավանդական ձևերը՝ ծնողական ժողով, օրագրի վարում, հեռախոսազանգ, նամակագրություն: Վերջերս դրանց ավելացել է նաև էլեկտրոնային հաղորդակցությունը: Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը որոշակի դժվարություններ է ներկայացնում հատկապես առաջին դասարանը ձևավորելիս: Հաճախ են ծնողները պասիվ դիտորդի դեր ստանձնում: Գուցե պատճառն այն է, որ ծնողները ծանոթ չեն միմյանց և ամբողջ դասարանի աշակերտներին: Մի մասն էլ աշխատանքով ծանրաբեռնված է կամ զբաղված տնային գործերով: Ցանկացած ծնող դաստիարակում է իր երեխային այնպես, ինչպես ինքն է համարում ճիշտ՝ իր ունակությունների, հնարավորությունների, զգացմունքների, համոզմունքների սահմաններում: Շատերը ձեռնպահ են մնում «անհարկի» միջամտությունից: Այս ամենը պահանջում է նպատակաուղղված աշխատանք: Մեր խնդիրն է՝ ստեղծել ծնողական ամուր թիմ՝ պատրաստ մասնակցելու դպրոցի կյանքին: Ես փորձում եմ շարժել ծնողների հետաքրքրությունը և շահագրգռությունը ուսումնական գործընթացին մասնակցելու առումով: Երեխայի ծնողը դառնում է իմ գործընկերը, խորհրդատուն և համախոհը: Հաճախ եմ անցկացնում ժողովներ, որոնց նպատակն է՝ ծնողներին զինել մանկավարժական կոնկրետ գիտելիքներով: Մեր

հանդիպումները դառնում են կարծիքների քննարկման և գործնական առաջարկությունների ներկայացման միջոցներ: Պարզ է, խոսակցության թեման երեխաներն են: Աշխատում եմ նրանց ներկայացնել առավելապես իրենց դրական հատկանիշներով: Խուսափում եմ կտրուկ բողոքներից , բացասական որակումներից: Ժողովները գումարվում են հիմնականում կոնկրետ թեմատիկ խորագրերի ներքո:

Ներկայացնեմ իմ անցկացրած ժողովներից մի քանիսը:

1.Պատիժ և խրախուսանք

Ընդհանուր հարցադրում: Ինչպե՞ս դաստիարակել երեխային, որպեսզի հնարավոր լինի բացահայտել այն լավագույնը, որը առկա է նրա մեջ: Միանշանակ և բացառիկ դեղատոմսեր գոյություն չունեն և չեն կարող լինել: Չկան կատարյալ մարդիկ, կատարյալ երեխաներ և ծնողներ: Սակայն դա չի նշանակում,թե պետք է աչք փակել մարդկային թերությունների և արատների հանդեպ: Կատարելության ձգտումը պայքար է՝ ամենօրյա հետևողական աշխատանքի միջոցով: Ծնող լինել՝ նշանակում է ամբողջ կյանքում սովորել, պատրաստ լինել այդ դերին: Բնությունից մարդուն պարգև տրված այս առաքելությունը երջանկություն է, սակայն ունի իր ծայրահեղ հակասական կողմեր: Այդ երջանկությունը բացարձակ չէ: Այն պահանջում է մշտական նվիրումի, ինքնակատարելագործվելու,զավակին սատար լինելու պատրաստակամություն:

Պատժելը և խրախուսելը՝ որպես դաստիարակության մեթոդ, ոչ միշտ են դրական դեր խաղում անձի զարգացման ընթացքում, սակայն ծնողները հաճախ են դրանք կիրառում: Շատ հաճախ, երբ ծնողները սխալ ու կոպիտ են վարվում կամ պատժի ծայրահեղ միջոցների դիմում, երեխան դառնում է նյարդային, ագրեսիվ և անհավասարակշիռ: Ահա այս մասին է մեր այսօրվա զրույցը: Փորձենք հասկանալ՝ ի՞նչ է պատիժը և խրախուսանքը: Ինչպիսի՞ն կարող են լինել դրանք, և անհրաժե՞շտ են, արդյոք, դաստիարակության մեջ: Մինչ զրույց սկսելը ծնողներին առաջարկեցի բաժանվել 3 խմբի և խմբերով քննարկել, թե ինչպես են պատժում կամ խրախուսում իրենց երեխաներին: Յուրաքանչյուր խմբի պատասխանները լսելուց հետո ներկայացրի նաև երեխաների կարծիքները՝ իրենց ընտանիքներում պատիժների և խրախուսանքների վերաբերյալ: Ծնող-հոգեբանը ներկայացրեց հարցի լուծումը հոգեբանական տեսանկյունից: Նա շեշտեց, որ պատիժը պիտի լինի պատճառաբանված, հիմնավորված, որպեսզի չվիրավորի երեխայի անձը: Անպայման պետք է ջանալ բացատրել արարքի լրջությունը: Հակառակ դեպքում երեխան այն կարող է դիտարկել որպես անարդարացի գործողություն: Պատիժը պետք է վերաբերի ոչ ընդունելի արարքին, ոչ թե այն կատարած անձին: Պատժի

ծայրագույն ձևը թերևս կարող է լինել երեխային սիրելի զբաղմունքից զրկելը: Կարելի է նաև խրախուսել արարքը՝ չգերագնահատելով այն, որպեսզի չարժեզրկվի: Որպես վերջաբան ձևակերպեցինք, որ ինչպես դեղորայքը չի ծառայում նպատակին, եթե չափաբաժինը չափից մեծ է, այնպես էլ խրախուսումն ու քննադատումը չպիտի անցնեն չափերը:

2. Տեղեկույթի ընկալումը և վերարտադրումը երեխայի կողմից

Ժողովի օրակարգը ներկայացնելուց հետո ծնողներին առաջարկվում է՝ «Հիշի՛ր, հաղորդի՛ր կամ հեռագրի՛ր» խաղը: 3-4 ծնող դուրս են գալիս լսարանից: Մյուսներին հաղորդում ենք 3 նախադասությունից կազմված մի տեքստ, որը պիտի հաղորդեն հաջորդաբար ներս եկողներին: Խաղի ավարտին ստացվում է մի պատմություն, որը շատ քիչ ընդհանրություն ունի սկզբնապես ասվածի բովանդակության հետ: Քննարկվում է խաղի արդյունքը: Ծնողների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ նույն կերպ ամեն երեխա յուրովի է ընկալում և վերարտադրում լսածը:

Խաղային իրավիճակը շարունակվում է: Ծնողներին բաժանում ենք թղթեր և խնդրում, որ նրանք գործողություն կատարեն ըստ հրահանգի: 3-4 հրահանգ կատարելուց հետո համեմատեցինք արդյունքները: Ծնողները նկատեցին, որ ոչ բոլորի աշխատանքն է նույնը ստացվել:

Եզրահանգում: Երեխաներն էլ են յուրովի ընկալում և կատարում միևնույն հանձնարարությունը:

## *4. Ամփոփում*

Հետազոտության արդյունքների վերլուծությունն ինձ հնարավորություն է ընձեռում անելու հետևյալ եզրակացությունները.

Հասարակության զարգացման արդյունքում սոցիալ-տնտեսական, քաղաքական վերածևումներն ու զարգացումներն իրենց խորը կնիքն են դրել դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների վրա, որի ակտիվացմանը արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունները հավաստում են, որ հիմնախնդրի արդիականությունն ունի օբյեկտիվ, անհրաժեշտ, պատմականորեն օրինաչափ և մանկավարժական կառավարման տեսանկյունից նպատակամղված բնույթ:

Ուսուցիչ-ծնող համագործակցության հիմնախնդրի վերաբերյալ հետազոտական աշխատանքի տեսական վերլուծությունը և մանկավարժական փորձի արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1. Ժամանակակից հասարակության մեջ մանկավարժական նոր՝ մարդասիրական իդեալների վրա հիմնված հարացույցի ձևավորման գործընթացում հատուկ արդիականություն է ձեռք բերում ուսուցիչ-ծնող համագործակցության համատեքստում ծնողների ու երեխաների փոխգործակցության արդյունավետության բարձրացման խնդիրը:

2. Հետազոտությունում բացահայտված և հիմնավորված են կրթական բարեփոխումների արդի փուլում ուսուցչի և ծնողի համագործակցության կազմակերպման վերաբերյալ մոտեցումները:

3. Հետազոտության մեջ ուսուցիչ-ծնող համագործակցությունը, ծնողների և երեխաների փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ընտանիքի դաստիարակչական ներուժը դիտարկվել են որպես նրանց փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորող գործոններ:

4. Հետազոտության ընթացքում լուծվել են հետևյալ առաջադիր խնդիրները.

- Հետազոտությամբ բացահայտված են դպրոցի դերը սովորողների և ծնողների փոխգործակցության գործում, մանկավարժների և ծնողների համատեղ գործունեության հնարավորությունները, ուսուցիչներին անհրաժեշտ հաղորդակցման, ճանաչողական, հուզական որակների ձևավորման ուղիներն ու միջոցները, որոնք մանկավարժական պրակտիկայում այսօր համարվում են լուրջ հիմնախնդիրներ:

- Բնութագրված են մանկավարժների, սովորողների և ծնողների համագործակցության իրական վիճակը դպրոցում, ընտանիքում, ինչպես նաև դպրոցի հնարավորություններն այդ գործընթացի բնույթի վրա ազդելու համար:
- Բնութագրված են դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության առանձնահատկությունները:

5. Հիմնախնդրի վերաբերյալ իմ կողմից կատարված հետազոտությունը թույլ տվեց եզրակացնել, որ որպես դաստիարակության գործընթացի սուբյեկտ՝ ընտանիքը կատարում է մի շարք դաստիարակչական գործառույթներ: Այդ գործառույթների բնութագրման համար սահմանված են «ընտանիք» հասկացության էությունը, կառուցվածքը, տիպերը, նրա դաստիարակչական ներուժը:

6. <<Պատիժ և խրախուսանք >> , <<Տեղեկույթի ընկալումը և վերարտադրումը երեխայի կողմից>> թեմաների քննարկման արդյունքում ես հասա նրան , որ ծնողները համոզվեցին և համաձայնեցին ինձ հետ , որ երեխաները կարող են ունենալ տարբեր ընկալման կարողություններ , և որ յուրաքանչյուրին պետք է ցուցաբերել անհատական մոտեցում : Աշխատանքիս արդյունքը եղավ այն , որ այն ծնողները , ովքեր ավելին էին պահանջում երեխայից , քան նրա կարողություններն են թույլ տալիս , համաձայնեցին ինձ հետ , և մեր համատեղ աշխատանքը տվեց ցանկալի արդյունք :

## *Օգտագործված գրականության ցանկ*


1. Ս. Մարության, Ա. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, Եր.,2008:
2. Արզումանյան Ս. Ջ., Հոգեբանություն, Երևան, 2002:
3. Зверьева О.Л. ,,Школа родителей,, 1994 г.
4. Ա. Ա. Սեդրակյան, «Ընտանիքի հոգեբանություն»:
5. Ա. Նալչաջյան, «Ընտանիքի հոգեբանություն»:
6. Յու. Ա. Ամիրջանյան, Ա Ա Սահակյան, «Մանկավարժություն» -Եր., 2005թ.:
7. «Մանկավարժական միտք» ամսագիր, 2014(1-2):
8. «Ընտանիք և դպրոց»-2011-3, 2013-2, 2013-5, 2014(1-2):
9. «Մանկավարժություն» ամսագիր, 2009 (1-2):
10. «Նախաշավիղ»-6, 2009, «Նախաշավիղ»-4, 2016:
11. Сухомлинский В.А., О воспитании. – М.: Политиздат, 1985.
12. «Նախաշավիղ» - 6, 2009: